

Անհապաղ թողարկման համար  
29-ը հունվարի, 2008թ.

Պատասխանատու՝ Արսեն Ասլանյան,  
ՀՌԿԿ-Հայաստանի ծրագրերի ղեկավար  
է-փոստ՝ [arsen@crcc.am](mailto:arsen@crcc.am), հեռ. 58-1330, 58-1450

## Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնները հրապարակելու են հերթական ընտրանքային հարցման արդյունքները

Հայաստանի Հանրապետություն, Երևան – 2008թ. հունվարի 30-ին, ժամը 11-ին Կոնգրես հյուրանոցի (Իտալիայի փող 1) շքասրահում կկայանա Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների (ՀՌԿԿ) կողմից 2007թ. անցկացված ընտրանքային հետազոտության շնորհանդեսը: Թվով արդեն չորրորդ այս հետազոտությամբ հարցվել են Հարավկովկասյան երկրներում պատահականորեն ընտրված շուրջ 8.000 տնային տնտեսությունների չափահաս անդամներ, որոնք պատասխանել են ավելի քան 300 հարցերի:

Հավաքագրված տվյալներից առավել ուշագրավ են քաղաքական հայացքներին ու հասարակական արժեքներին վերաբերող տվյալները: Այսպես, Հայաստանում 2007թ. հոկտեմբերին հարցվածների համարյա կեսը հայտնել են, որ չեն հետաքրքրվում ազգային քաղաքականությամբ. դրանով հետաքրքրվողների 36%-ը խոստովանել է, որ ազգային քաղաքականությունը հաճախ կամ միշտ այնքան բարդ է թվում, որ դժվար է հասկանալ, թե ինչ է կատարվում: Այդուհանդերձ, ազգային քաղաքականությամբ հետաքրքրվողների միայն 38.6%-ն է դրա ուղղությունը ճիշտ համարում: Երկրի Նախագահին վստահում է 2007թ. հարցվածների 42%-ը, Ազգային ժողովին՝ 19%-ը, իսկ Կառավարությանը՝ 27%-ը: Ըստ որում, ՀՀ կառավարությանը վստահում է երևանաբնակների 17%-ը (2006թ. 12.3%-ի դիմաց), մինչդեռ այլ քաղաքներում և գյուղական վայրերում վստահում են հարցվածների համապատասխանաբար՝ 26 և 36%-ը:

Հարավկովկասյան երկրներում հասարակական արժեքների բազմաթիվ ընդհանրությունների հետ մեկտեղ կան նաև էական տարբերություններ: Բոլոր երկրներում էլ աշխատասիրությունն ու պատասխանատվությունը մտել են երեք այն ամենակարևոր որակների շարքը, որոնք պետք է սերմանել թե՛ տղա, թե՛ աղջիկ երեխաների մոտ: Իր կարևորությամբ երրորդ ցանկալի որակը տղաների համար Վրաստանում և Ադրբեջանում հարցվածները (համապատասխանաբար՝ 61 և 66%-ը) համարել են անկախությունը, իսկ Հայաստանում՝ հանդուրժողականությունը և հարգանքը այլոց նկատմամբ (70%): Աղջիկների համար որպես ցանկալի որակ Հայաստանում ընշվել է համեստությունը (75%), մինչդեռ Վրաստանում՝ կրոնական հավատը (56%), իսկ Ադրբեջանում՝ տնտեսվարությունը (49%):

Խիստ ուշագրավ են իրենց կյանքի ընթացքը կարգավորելու հնարավորության մասին հարցի պատասխանները. 2007թ. հայաստանում հարցվածների 36%-ը կարծում է, որ իրենցից քիչ բան է կախված, մինչդեռ Վրաստանում և Ադրբեջանում այդ կարծիքին են միայն 21 և 30%-ը, համապատասխանաբար:

Զգալի են տարբերությունները գյուղական և քաղաքային բնակչության դիրքորոշումների միջև: Այսպես, երևանաբնակների 35.3%-ը լավ աշխատանք գտնելու համար ամենակարևոր գործոն է համարում անձնական կապերը, մինչդեռ այլ քաղաքներում և գյուղական վայրերում ամենից ավելի կարևորում են կրթությունը (հարցվածների 35.8 և 36.2%-ը, համապատասխանաբար): Դրա հետ մեկտեղ հետազոտությամբ պարզվել է, որ Հայաստանում հարցվածների 54%-ը չունեն ռուսերենից բացի որևէ այլ օտար լեզվի տարրական իմացություն, միայն 21%-ն է որոշ չափով տիրապետում համակարգչին, և միայն 14%-ն է կարողանում օգտվել ինտերնետից կամ էլեկտրոնային փոստից:

ՀՌԿԿ տվյալների հավաքագրման այս նախաձեռնությունը բացառիկ հնարավորություն է տալիս զուգահեռներ անցկացնելու Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և քաղաքական զարգացումների, ինչպես նաև այդ հանրապետությունների գյուղական ու քաղաքային վայրերում զարգացումների միջև: Հետազոտությունը լիարժեք տեղեկություններ է պարունակում նաև միգրացիոն միտումների մասին:

ՀՌԿԿ հավաքագրած տվյալների բազաները և հարակից փաստաթղթերը ազատորեն հասանելի են՝ [www.crcccenters.org](http://www.crcccenters.org) էջկայքից:

ՀՌԿԿ-ն հետազոտական ռեսուրսների և ուսումնական կենտրոնների ցանց է՝ հիմնադրված 2003 թվականին Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում՝ Հարավային Կովկասում հասարակագիտական հետազոտություններն ու պետական քաղաքականության վերլուծությունը խթանելու նպատակով: Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և պետական համալսարանների համագործակցությամբ գործող ծրագիրը գիտնականներին և քաղաքական գործիչներին առաջարկում է համատեղ հետազոտությունների, դասընթացների և տարածաշրջանային համագործակցության բազմաթիվ հնարավորություններ: Հայաստանում ՀՌԿԿ ծրագրերի մասին տեղեկությունների համար դիմեք.

**ՀՌԿԿ-Հայաստան**, Երևան 0025, Աբովյան փող., 52, 3-րդ. հարկ: Հեռ./ֆաքս՝ 58-13-30, 58-14-50; [crcc@crcc.am](mailto:crcc@crcc.am); [www.crcc.am](http://www.crcc.am):  
Վրաստանում և Ադրբեջանում ՀՌԿԿ գործունեության մասին հավելյալ տեղեկությունների համար այցելեք [www.crcccenters.org](http://www.crcccenters.org):